ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2023-2024 ՈՒՍ ՏԱՐՎԱ

2023-2024 ուս տարում իրականացվել են կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ուսանողներին և շրջանավարտներին, խորհրդատվության իրականացում, ուղղորդման աշխատանքների կատարում, աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցակցության բարձրացման նպաստում, մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտման աջակցում:

2023-2024 ուս տարում (սեպտեմբեր-մայիս) համագործակցել ենք 43 գործատու կազմակերպությունների հետ:

2023-2024 ուս տարում (սեպտեմբեր-մայիս) անցկացվել են անհատական խորհրդատվություններ թվով 95 ուսանողների հետ:

2023-2024 ուս տարում 46 ուսանողներ ուղղորդվել են ՄՍԾ (Միասնական սոցիալական ծառայություն):

2023-2024 ուս տարում ավարտել են 74 ուսանողներ, որից բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվել են 4 ուսանող՝

1. Սարգսյան Հայկ Հայկի (Ակադեմիա)
2. Մկրտչյան Կարապետ Խաչատուրի (Պոլիտեխնիկ)
3. Գասպարյան Անի Գևորգի (ՇՊՀ)
4. Դրմեյան Նարեկ Արմանի (ՇՊՀ)

2022-2023 ուս. տարվա շրջանավարտներից աշխատում են թվով 15 ուսանող, որից 4 ուսանող իրենց մասագիտությամբ, իսկ 11 ուսանող ոչ իրենց մասնագիտությամբ:

2023-2024 ուս տարում (սեպտեմբեր-մայիս) ունեցել ենք տարբեր համագործակցություններ հասարակական կազմակերպությունների հետ:

Հյուրընկալել ենք՝ «Երիտասարդական նախաձեռնություններ» կենտրոնին, ացելել «Միասին» հիմնադրամ և Գյումրու հյուրընկալության արվեստի և զբոսաշրջության ակադեմիա, «ԱՐՏ» գեղեցկության սրահ:

Հանդիպումներ ենք ունեցել՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի «Հանրային կապերի մասնագետ», SMM-ի դասընթացավար Արփինե Մխիթարյանին, ով ուսանողների հետ անցկացրեց չափազանց հետաքրքիր դասընթաց-պարապմունք՝ «Նավարկություն թվային մարքեթինգում» թեմայով:

Տեխնո-կրթական ակադեմիայի՝ PR մենեջեր Հրաչ Սահակյանին, կրթության բաժնի համակարգող Ելենա Մարտիրոսյանին և ծրագրավորող Աշոտ Վարդանյանին, ովքեր ուսանողներին ներկայացրին ակադեմիայում կազմակերպված FULL-STACK և MACHINE LEARNING ծրագերը:

Ուսանողների հետ կազմակերպվել են 46 բազմաբնույթ սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են աշխատաշուկայի պահանջարկին, գործատուներին ներկայանալու հմտություններին, ՈՒԹՀՌ վերլուծությանը և այլ թեմաների:

Ուսանողների հետ այցելել ենք տարբեր մասնագիտական վայրեր, զրուցել գործատուների հետ:

Ստորև ներկայացված են կարիերայի կենտրոնի կողմից իրականացված սեմինար դասընթացների թեմաները.

1. Ուսանողներին կարիերայի կենտրոնի գործառույթների ներկայացում
2. Անձի ինքնավերլուծություն
3. Ուսանողների իրավունքները և պարտականությունները
4. Անձի SWOT վերլուծություն
5. Հուզական ինտելեկտ
6. Աշխատող-գործատու փոխհարաբերություններ
7. Ինքնաներկայացում
8. Այցելություն Գյումրու հյուրընկալության արվեստի և զբոսաշրջության ակադեմիա
9. Գործատուին ներկայանալու հմտություններ
10. Խաղ արձաններ
11. Խորհուրդներ առաջին անգամ աշխատանքի ընդունվողին
12. Մեդիագրագիտություն
13. «Շարունակական /հարատև կրթություն և կարիերայի զարգացման հմտություններ»
14. «SS կիրառությունը տարբեր ոլորտներում»
15. Ինքնակենսագրություն, էմոցիոնալ ինտելեկտ
16. Թվային մարքեթինգ
17. FULL-STACK և MACHINE LEARNING ծրագեր
18. Ինքնագնահատում
19. Թիմային աշխատանք
20. Կարիերայի պլանավորում, կարիերայի հնարավորությունների ուսումնասիրում
21. Աշխատանքի որոնման նորագույն մեթոդներ
22. UX UI ծրագիր
23. Կարիերայի կառավարում
24. Բիզնես գաղափարներ

- 2024թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 14-ը մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ է իրականացվել Գյումրու թիվ 24, 4, 29, 30, 15, 38, 40, 19, 11, 41 և Մայիսյանի միջնակարգ դպրոցներում:
- 2024 թվականի մայիսի 14-15 Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի կազմակերպել էր «Կարիերայի օր» և «Բաց դռների օր» միջոցառում, որի ընթացքում աշակերտները ծանոթացան ուսումնարանում գործող մասնագիտությունների հետ:
- 2024 թ. ապրիլի 15-ին ուսումնարանում մասնագիտական կողմնորոշում ունեցան «Նոր լույս» մենթորինգ կենտրոն ՀԿ-ի մենթիները, կարիերայի կենտրոնի պատասխանատուն սաների համար ուսումնական հաստատությունում կազմակերպեց շրջայց:
- 2024 թվականի մայիսի 7-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի վեց աշխատակիցներ մասնակցեցինք Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ» թեմայով մոդուլային դասընթացի հիման վրա Շիրակի ՏՄԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստման դասընթացին, որը կազմակերպվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակներում:
- 2024 թվականի հունիսի 21-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության

կենտրոնի կողմից անցկացվեց մեկօրյա մոդուլային դասընթաց՝ «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեմայով:

- 2024 թվականի փետրվարի 24-ին «Միասին» հիմադրամում մասնակցել ենք «Աշկերտությունը որպես կրթության և մասնավոր հատվածի համագործակցության ձևաչափ» մեկօրյա վերապատրաստմանը, որը վարեց Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի տնօրեն, ՄԿՈՒ փորձագետ տիկին Տաթևիկ Գասպարյանը:
- 2024թ. ապրիլի 25-26 Աղվերանում իրականացվել է վերապատրաստում համայնքը վեր է շահույթից, տեղական սոցիալական փոփոխության անիմացիա, համագործակցություն պետական մարմինների, ՄԿՈՒ, ՓՄՁ և ՀԿ-ների միջև: Վերապատրաստման ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները
  - Տեղական առաջնորդների փորձի ներկայացում
  - Համերաշխության մատրից
  - Համատեղ կառուցելով համերաշխ համայնք մաս1
  - Համատեղ կառուցելով համերաշխ համայնք մաս2

- 2023թ. հոկտեմբերի 26-27 ք. Վանաձորում Հայկական Կարիտաս, «Արամազդ.Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում» ծրագրի կողմից իրականացվել է վերապատրաստում:
  Վերապատրաստման նպատակը ՝ «Ձեռնարկատիրական հմտությունների և գործարար ծրագրերի մշակում»:
  Քննարկվող թեմաները և հարցերը՝
  - Մարքեթինգ 7 P-երի աշխատանք ՄՈՒՀ ներկայացուցիչների կողմից
  - Վարժություն "Կոմունիկացիա" ինչպես է այն աշխատում
  - Գանտի պլան,ամորտիզացիա
  - Արտադրական պլան, ինքնարժեքի հաշվարկ
  - Արտադրական և լրիվ ինքնարժեքների
  - Արտադրություն թե ծառայություն
  - Մուտք ֆինանսական պլան
  - Ֆինանսական կարևոր աղյուսակների օրինակներ
  - Կապիտալ, ընդհանու կապիտալի պահանջ
  - Վարժություն մանկական աթոռի արտադրություն
  - Հարցաթերթերի մշակում և օրինակաների քննարկում

- 2023թ հոկտեմբերի 05-07 Աղվերանում իրականացվել է վերապատրաստում «Կարիերա Լաբ» կարիերայի և շարժունության կենտրոն, Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն, GIZ-ի կողմից
  Վերապատրաստման նպատակը
  ՄԿՈՒ հաստատություններում զարգացնել կարիերայի ուղղորդման մասնագետի գիտելիքներն ու հմտությունները, ամրապնդել կարողությունները :
  Վերապատրաստման ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները
  - Հաղորդակցման դերը կառավարման գործընթացքում
  - Համագործակցություն և ներգրավվածություն

- Վիրտուալ իրականության տեխնոլոգիաների կիրառումը կարիերայի ուղղորդման գերծընթացքում
- VR գործիքի փորձարկում
- Հեղինակության բարձրացման վրա ազդող հիմնական գործոնները
- Հասարակության հետ կապեր (PR)
- Հանրային միջոցառումներ
- Քարոզչություն, հրապարակախոսություն, թե հանրային կապեր

Կատարող՝ կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյան